



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. Ճ. ՄԻՐՈՒԵԽ

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ*

Գ. ՆԱՐԵԿ ԵՎ ԻՐ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

1. ՀԱՆՈՒԽ ՀՈԳԵԿԱՆ ՊԱՏՎԱՍԻ

Հայ ժողովուրդի ստեղծագործ ճիգերում ուշագրավ մեկ երեսն է իր ձգումը՝ հաղորդակից դառնալու օտար մտքին:

Հազվադիպ են այն ժողովուրդները, որոնք կրցած են յուրացնել դուրսեն եկած ավիշը՝ առանց համարելու իրենց սեփական հոգին, ինչպես կրցած է ընել հայ ժողովուրդը իր բովանդակ կյանքին մեջ:

Իդուր չէ, որ Թարգմանչաց դար կոչեցին երկունքի, ճիգի, ստեղծագործության այն մեծ դարը, որ հայ գրականությունը օժտնությունից գոհարնելի գոհարներով: Թարգմանությանց դար մըն էր ան, ուր օտար միտքը կուգար հայ մտքին մեջ պարպիլ, ձուլվիլ անոր մեջ, ու անոր հետ նույնանալ:

Առաջները երեմն իրավունք ունին: «Traduttore traditore» կըսե իտալական առածք: Արդարեւ, «Ով կթարգմաննէ՝ կդավաճաննէ»:

Վերածվելով օտար լեզվի մը, որքան կկորսնցնեն իրենց հմայքեն, մանավանդ արվեստի երկերը:

Թարգանիշներ կան, որոնք կգուեհացնեն, կայլանդակեն, կիսեղաթյուրեն իրենց թարգմանածը: Երբեմն չեն կրնար թափանցել

անոնք հեղինակին իսկական մտածումներում, երբեմն ալ անզոր կմնան զանոնք արտահայտելու իրենց լեզվովը: Քիշերը միայն կհաջողին հարազատ մնալ:

Եվ այնուամենայնիվ դյուրին բան էր Ուկեղարու մեր վարպետներուն համար զմայլելի թարգմանությամբ մը հայերենի վերածել օտար հրաշակերտները: Գրաբարը արդեն շքեղ լեզու մըն էր, բյուրեղացած ու գեղեցկացած: Ան ընդունակ էր օտար միտքը արտահայտելու լրիվ:

Այդ պայմաններում մեջ հրաշք մը չէր, երբ ստեղծվեցավ Թարգմանությանց թագուհին:

Հետագա դարերուն ալ գրաբարը ծառայեց օտար միտքը հայերենի վերածելու ձիշտ է, բնագիրներ եղան, զորս դեռ լրիվ արտահայտելու ընդունակ չէին հայ. լեզվի բառերը, և թարգմանիչները, շվարած, մոլորեցան հաճախ, երբ կփորձեին հարազատ թարգման ըլլալ բնագրին: Հունաբան դպրոցը ուրիշ բան չէ մեր մատենագրության մեջ, բայց եթե տկարությունը մեր թարգմանիշներուն, որոնք նախընտրեցին հայ լեզուն, աղճատել, քան բնագրիը:

Բայց երբ իր գահույքեն վար առին գրաբարը, ավելի և շվարեցան մեր թարգմանիշները: Ձիշտ է, որ ուամկորենի տիրապե-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № թ-ից, ժ-ից, ժկ-ժթ-ից և 1961 թվականի № № թ-ից և դ-ից:

տուփենեն ետքն ալ շատեր դեռ երկար ա-
տեն զգիշանեցան անով թարգմանել օտար
հրաշակերտները, և շարունակեցին գրաբա-
րին կողում ընել զանոնք մատուցանելու
համար հայ ժողովորդին՝ առանց իրենց
փուլին ըլլալու, թե այլև անոր խորթ է իր
պապերուն բարբառը:

Թայց կարելի շէր զեռ շատ երկար փա-
խուստ տալ նոր հայերենեն: Ժողովուրդը
չէր հասկնար արդեն գրաբարը, և մյուս
կողմեն կարուտ էր օտար մտքի պատվաս-
տին: Եվ արդարն, սկսան աշխարհաբարի
թարգմանվի օստար երկեր, երր հազիվ ե-
լած իր խանձարուրեն, կոկվելու, կանոնա-
վորվելու, գեղեցկանալու ճիգեր կըներ
այդ աշխարհաբարը:

Ինչպես ոսկեդարուն, նոր օրերուն ալ Ս.
Գիրքն էր, որ փորձեց հայ ժողովուրդին
ձեռքը գալ անոր հասկցած լեզվով:

Թայց այս անգամ բողոքականներն էին,
որոնք փորձն ըրին հայ ժողովուրդին Ս.
Գիրքը կարգացնելու նոր հայերենով:

Այդ նոր հայերենը իր օրորոցին մեջ էր
դեռ, և Ս. Գիրքը, զոր բողոքականները մեր
ձեռքը տվին, գոեհկացոց Աստուծո շոնչը:

Եվ ան պիտի գոեհկանա ամեն անգամ,
որ փորձեն ցնցոտիներ հազցնել անորու
ծիշտ է, այսօրվան մեր աշխարհաբարը
անցյալ դարու ոսմկորենը չէ ալ. բայց
այնուամենայիվ իր դասական ձեր դեռ չէ
գտած ան: Արվեստագետն արվեստագետ
ան կտարերի, ու բացառիկ շնորհ ունենալ
պետք է, չգոեհկացնելու համար թարգման-
ված երկը:

2. ՆԱՐԵԿԸ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեր հին մատենագրությունը արդի հայե-
րենին վերածելու փորձերը շատ պվելի նոր
են:

Այն օրեն ասդին, երր գրաբարը գնաց
հանգչի մեռյալ լեզուներու դագաղին մեջ,
երկրի վրա իրը վերջին ապաստան Եկեղե-
ցին ունենալով միայն, և երր սերունդ մը
հասավ, որ հոգեկան մեր գանձերը ճաշա-
կելու այլևս ի վիճակի չըր, անհրաժեշտու-
թյունը ինքնին կստեղծվեր մեր հին գրակա-
նությունը նոր լեզվով տալու հայ նոր սե-
րունդին ձեռքը:

Եթե գննդակ գործ էր մեր դասականները
վերածելու արդի հայերենի ասկե դար մը
առաջ, երբ զեռ խանձարուրին մեջ էր այդ
հայերենը, մեր օրերուն արդեն այդ վախը
չկար Այլևս կարելի էր մեր նոր լեզվովը
տալ հայ հին դասականները:

Արդեն իսկ մեր դասականներեն շատերը,
մանավանդ մեր հին պատմիշները, վերած-
ված են աշխարհաբարի: Այդ առթիվ գո-

վեստի արժանի է Սովետական Հայաստանի
Գիտությանց ակադեմիայի նախանձա-
խնդրությունը մեր դասականները լուս ըն-
ծայելու այսօրվան հայերենով ալ:

Պարագան քիչ մը տարբեր է սակայն,
երբ կուզենք մեր արդի լեզվին վերածել մեր
հին մատենագրության զուտ գրական եր-
կերը: Պետք է զուն ևս արվեստագետ մը
ըլլաս, արվեստի գործի մը գեղեցկությունը
պահպանելու համար կատարած թարգմա-
նությանդ մեջ: Քիշերուն միայն տրվեցավ,
օրինակ, հաջողի շարականները աշխարհա-
բարի վերածած ատեն:

Ուրիշներու կարգին, եղիշե Դուրյան և
Հայ Եկեղեցվո շարականներն արդի հայե-
րենի վերածելու փորձեր ըրավ: Ան նախ-
ընտրեց Շնորհալին և անոր մեջ սահմա-
նափակեցավ, եղ սակայն չկրցավ այն
միենույն արվեստագետու մնալ, ինչպիսին
էր իր սեփական քերթվածներուն մեջ, ոչ
ալ Շնորհալին իր շնորհին մեջ պահել՝ զայն
աշխարհաբարի վերածած ատեն:

Իր աշակերտը՝ Գարեգին Տրապիզոնցին
և փորձեր բրավ աշխարհաբարի թարգմա-
նելու հայ հին շարականներն շատերը,
բայց ան ալ բախեցավ, Դուրյանին նման,
զանոնք իրենց բնագրին գեղեցկությունը մեջ
կարենալ պահելու դժվարության, թեև մեղ-
քը հաճախ մեր ներկա հայերենին էր, որ
քեզ կստիպե գրաբարի սեղմ տողերը ծա-
վալելու, երբ կփորձես աշխարհաբարի վե-
րածել:

Փոխարեն՝ Նարեկի թարգմանության մեջ
ավելի բախտավոր եղավ ան:

Բաղմաթիվ դժվարությանց առջև կանգ-
նած է, սակայն, Նարեկի որևէ թարգմանիչ:
Ան ստիպված է հարազատ մնալ երկի մը, որ
արվեստի բացառիկ առանձնահատկություն-
ներ ունի և հետևաբար բացառիկ ալ հավակ-
նություն՝ շխաթարվելու թարգմանված ա-
տեն:

Ամենեն առաջ թարգմանիչը ստիպված է
նկատի ունենալ երածականությունը
(musicalité), որ Նարեկացիի արվեստին
գլխավոր հրապույն է: Մեր աշխարհաբարը
շունի հնարավորությունները զայն լրիվ
պահպանելու: Աշխարհաբարի վերածված
ատեն, նախադասությանց մեջ կսպրդին
այնպիսի մասնիկներ, հաճախ բառեր ալ
որոնք կվթարեն բնագրին երածականու-
թյունը:

Կշռույթը (gythme), որ գլխավոր հատկա-
նիշներն մեկն է Նարեկացիի արվեստին,
չի կրնար նույնպես դժվարության շմատնել
իր թարգմանիշը: Ու հոս ալ մեջ կիսանգարեն
աշխարհաբարի մասնիկները, երբ կսպրդին
բառերու միջն:

Պրոֆ. Մկրտչան իրավագի էր, երբ դիտել կուտար. «Գործածվող շափերի բազմազանությունը և հաճախակի փոփոխությունը նարեկում, իհարկե, բանաստեղծի բմահաճույքի կամ ձեսպաշտական հակումների արդյունք չեն. ոչ ոք մեր միջնադարի գրականության պատմության մեջ նարեկացուափի ձեր գեղեցկության գդացողությունը և բմբոնողությունը հանդես չի բերել, հետեւար, գուցե և ոչ ոք նրա շափ գերծ չի ձեսպաշտական գայթակղություններից: Ուստանավորի շափի գեղեցկության բմբոնումը նարեկում զուգակցված է բովանդակության հետ. նարեկացու համար միշտ այն շափն է նախընտրելի, որի կիրառությամբ չի ճնշվում, այլ պատարացայտություն է գտնում բովանդակությունը: Նա ոչ մի դեպքում չի զուգաբրում բովանդակությունը, չի կաշկանդում իրեն առանձին շափական շրջանակներուի: Այլ կերպ նարեկը գեղարվեստական տեսակետից շափազանց կտուժեր, որովհետեւ այն մեծ և ուժեղ դրաման, որ ապրում է բանաստեղծը, այն անընդհատ փոթորկուալեկածությունների ենթակա հոգին երեք չեխն կարող միապաշտու միթմական-երածրշտական արտահայտություն ստանալ^{48x}:

Կշռությունները չեն միայն, որ ներդաշնակություն կուտան նարեկին: Ողբերգության ամրող մատյանը շափածո երկի մը տպավորությունը կիրողու:

Մանուկ Արեգյան փորձեց ապացուցանի արդարե, որ շափածո է նարեկը, թե ձեռագիրներու մեջ հատվածները չեն ներկայանար տողատված ձեռվ: Այնուամենայնիվ թարգմանիչը պետք է գիտակցի, թե գործունի տաղաչափալ հատվածներու հետ, և բայտ այնմ բազմապատկե իր ճիշգր:

Նմանաձայնությունը (օպոմատօքե), ինչպես նարեկացիի տաղերուն, նույնպես նարեկի զանազան հատվածներուն մեջ, նվազ դժվարության չի մատներ թարգմանիչը, եթե ան կուզե պահպանե, զայն իր թարգմանության մեջ ալ: Նարեկացին գրած է.

«... Հալին մեղք, հալածին գեք
իսպին կապանք, խորտակին շղթայք
տեղի տան տիրութիւնք
մեկնի մէզն, մերժի մառախուղն
զնայ զիշերն
տարագրի տագնապն
շքանան շարիքն
Հալածին յուսահատութիւնքն...»:

Փորձեցեք, եթե կրնաք, աշխարհաբարի մեջ ալ պահպանե, նմանաձայնությունը այս տողերուն մեջ:

Առեղծվածներով (épigramme) շփոթության մատնել իրենց ընթերցողները՝ հիներուն մեկ

քմայքն էր: Այդ քմայքը ունեցած է և նարեկացին: Իր նարեկին մեջ տեղ մը կըսե ան. «Քանզի իննուց յըսնից և թուոց երից և չորեկի տասանց ի վաղորդայնէ տունջեան առ մուստ արեւուն անդուստ առ նմին յակէտ կարկառմամբ»: Այս առեղծվածին լուծման շուրջ համաձայն չեն ցարդ մեր բնասերները: Հստ Ավետիքյանի, օրինակ, «իննուց յըսնից» կնշանակե 9×50=450, «Հորեակ տասանց» 4×10=40, գումարը 490, որ իր կարգին արտադրյալն է 70×7-ի, որով նարեկացին կակնարկե Քրիստոսի այն պատվերին, թե ընկերողը պետք է ներել 70×7 անգամ: Այս կերպով կմեկնե Գարեգին Տրապիզոնցին ալ, հատվածը թարգմանելով սապես: «Ինն անգամ յիսուն և չորս անգամ տասն հեղ բարիք գործենք»⁴⁹, Թորգուն եպիսկոպոս Գուշակյան հատվածը սապես կիթարգմանն. «Իթե հիսնիցս ինը և չորիցս տասն անգամ... իրարու ներելը գերիքը է 50»: Մինչ Ստեփան Մալիսայան կառաջարկե հետեւալ լուծումը. «Ինն յիսուն=450+թիւք երեք=3+չորեակ տասունք=40, ընդամենը 493, գումար, որ վերածվում է հետեւալ թուերին— 400, 70, 20 և 3, որոնք նպատակահարմար շարբով դասավորելով և տառերով արտահայտելով (70=2, 20=1, 400=3, 3=9) կստանանք հինգ բառոք»: Առեղծվածը այս ձեռվ լուծելի հետո, Մալիսայան կենթաղրի, թե նարեկացի ակնարկած է աղոթելու անհրաժեշտության մի վաղորդայնն ետունչեան առ մուստ արեւուս սահմանված աղոթքի հինգ ժամերուն, որոնք, բայտ ժամագրքի, հետեւալներն են. Առավոտու, Արեագյի, Երրորդ, Վեցերորդ և իններորդ, մինչդեռ աղոթքի մլուս շորս ժամերը (Գիշերային, Երեկոյան, Խաղաղական և Հանգստյան) դուրս կմնան ցերեկվան հիշյալ ժամերեն⁵¹:

Այլաբանություններով (allégorie), շրջաբանություններով (réiriphrase) և փիխարերություններով (téâtrephore) և լիցուն է նարեկացին, ինչ որ նույնպես դժվարությանց կմատնի թարգմանիչը:

Հայ բանասեր մը, օրինակ, բազմաթիվ փոխարերություններ կրազի նարեկեն: Նարեկացին հոն աչքի փոխարեն կրսի «Ճրագարան տեսութեանց», ականջի տեղ՝ «լսելիքաց դրունք», գլխի մազի տեղ՝ «զտիրեկ ոս-

49 Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Նարեկ», էջ 140:

50 Թորգուն եպիսկոպոս Գուշակյան, «Նարեկ», էջ 185:

51 Ատ. Մալիսայան, «Մի առեղծված նարեկի մեջ», վիեննա, 1911:

տոց գագաթան», ոտքի տեղ՝ «հաստարան բարձրութեան շինուածոյ մարմնոյ», և այն⁵²: Արդարեւ, խոսքի ձեւրու համախ հանդիպիս նարեկի մեջ, պետք է արթուն ըլլաս լվարելու համար:

ԽԵՐԵՆԱՐԱԲՆՈՒՐՅՈՒՆՆԵՐԸ, որոնցմով նույնպես լի է նարեկը, չեն կրնար շշփոթեցնել թարգմանիշները: Պետք է բացառիկ ուժ ունենա հոգիդ, որպեսզի անոնց թափանցես. և ասկե զատ, պետք է վարժված ըլլաս նարեկան հոգուան հուզումներուն, կնճռոտ կացիի հոգեկան հոգուանց ետին ճշգրիտ մտածումը պարբերությանց ետին ճշգրիտ մտածումը գտնելու համար:

Ոժանք կգտնեն նույնիսկ, թե այնքան ալ խրթնարանություն չկա նարեկի մեջ, որքան քեզ կթվի պահ մը, օվան բանասերները, որոնք խոսեն ին Ողբերգության մատյանի լեզվի մասին, իբր թերություն մատնանշել են, որ այդ լեզուն շատ տեղ մուլք է և խըրթին: Բայց այս կարծիքը այնքան էլ ճիշտ չէ: Եթե մի կողմ թողնենք այն հնարավոր քերականական աղավաղումները, որ կարող էին, թեկուզ պատահաբար, առաջանալ արտագրողների ձեռքով, ապա նկատված մթությունից ու խրթնարանությունից քիչ բան կմնա, համենայն գեպս՝ անհամեմատ քիչ, քան դրանք գոյություն ունեն նրա ներդրություններում, մանավանդ տաղերի մասում»⁵³:

Հետո ինչո՞ւ մեղադրել, թե խրթին է նարեկացին իր ոճին մեջ, երբ խրթին է ինքը մատյանին հոգին: Քառսին մեջեն ճամբա գտնել, փարատել մշուշը, որ տարածված է առջևնորդ, ու հասնի խորքը մարդկային հոգվույն՝ այդ է գերը անոնց, որ կփորձեն արվեստագետը վերլուծել:

Այդ դերն է վիճակված թարգմանիշին ալ: Մինչև որ շիշնես նարեկացիի հոգուույն խորը, զայն թարգմանել չես կրնար:

3. ՆԱՐԵԿ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆՆԵՐՈՎ

Օտար աշխարհը շատ բան չի գիտեր նարեկացին ու իր նարեկին մասին: Մեր դասականներուն մեծ մասը թարգմանված է օտար լեզուներու, ոմանք մեկե ավելի անդամներ, մինչ նարեկացին ցարդ անմատչելի մնացած է բլորին: Ու ալ անոր մասին շատ բան գրուծ է:

Երվանդ Շահազիկ կպատմեն, թե 1879-ին, երբ ուսանող էր Լազարյան ճեմարանի մեջ, Մկրտիչ էմին ուսւերենի նոր էր թարգմաներ Հայ Եկեղեցվո շարականները: «Հանգամանքից օգովելով, —կըսէ Շահազիկ: —մենք էմինին խնդրեցինք թարգմանել նաև նա-

⁵² Ստ. Մալխասյանց, «Գրիգոր նարեկացի», «Եղմանեածին», 1947, մայիս—հունիս, էջ 34:

⁵³ Պրոֆ. Մ. Մկրտչյան, «Գրիգոր նարեկացի», էջ 240:

րեկը: Նա պատասխանեց, որ դրա համար ինքը արդեն շատ ծեր է. «Բայց և այնպես, —ավելացրեց նա, —կփորձեմ»: Անցավ մի շաբաթ և նա բերեց ու կարդաց մեզ առաջին բանի թարգմանությունը: —

«Զայն հառաջանաց հեծութեան սրտի Ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսողդ զալտսնեաց»⁵⁴:

Այն ուսումնասիրության, զոր Զոպանյան 1895-ին լույս ընծայեց Mercure de France-ի մեջ նարեկացիին մասին՝ կցված էին քանի մը թարգմանություններ նարեկեն:

Տեղյակ ենք, որ կազգեն Կաթողիկոս իր կարգին նարեկեն քանի մը հատվածներ վերածած է ուսմաներենի, այն հանդիսության առթիվ, որ տեղի ունեցավ թուքրեշի մեջ 1951-ին, երբ կլրանար մեծ վանականին ծննդյան հազարամյակը:

Ավելի մոտ օրերու պետք է զանք, հանդիպելու համար ֆրանսացի բանաստեղծի մը՝ կուկ Անդրե Մարսելի, որ նարեկը ըմբռնած և անկե թարգմանած է բազմաթիվ էշեր, որոնք քեզ կվերացնեն իրենց թարգմանության ինչպես բնագրին մեջ⁵⁵:

Նարեկի ֆրանսերեն թարգմանությունը ամենեն շքեղ ընծաներեն մեկն էր, զոր օտար բանաստեղծ մը կրնար ընել հայ ժողովորդին:

4. ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆԱՐԵԿԸ

Ի՞նչ կարիք կար, պիտի ըսեք, նարեկը վերածելու աշխարհաբարի: Հասկնալի՝ դարձնելու համար մեր ժողովուրդին: Զէ՝ որ տասը դար է զայն կարդա մեր ժողովուրդը ու զայն կըմրոնի: Աղոթիք այնքան մատյաններուն մեջ ո՞րն է այնքան սիրելի եղեր իրեն, որքան նարեկը: Ո՞ր գիրքն է, զոր բարձին տակ կպահե, երրոր քնանա, ուրկի աղոթք կարդա հիվանդի մը սնարին, և զոր հետո կտանի իր պանդիստության մեջ:

Ու հետո, նարեկացին կարենալ թարգմանելու համար, պետք էր հաջողիլ զայն ըմբռնել, անով հափշտակվիլ, անոր բարձրանալ: Ամեն մեկ մահկանացուի տրված չէր թափանցել անոր, իմաստի խրթնություններուն համար նախ, որոնցմով լի է նարեկը, հետո, զարտովի ձևերուն համար, որոնցմով պառցված է անոր ոճը, և սանձարձակ բառերուն համար, որոնք քեզ կկեցնեն ու կշփոթեցնեն ամեն մեկ տողին:

⁵⁴ Ե. Շահազիկ, «Համառոտ տեղեկություն հայոց շարականների մասին», «Էլմիրածին», 1948, մարտ—ապրիլ, էջ 27:

⁵⁵ Կուկ Անդրե Մարսել, «Գրիգոր նարեկացի», Պարիդ, 1954, էջ 66 (ֆրանսերեն):

Եվ վերջապես պետք է չմոռնալ, որ նա-
րեկացին անմեկնելի է, և հետկարար ան-
թարգմանելի։ Զայն ըմբռնելու համար պետք
է հոգիդ անոր հուզումներուն բանաս, բա-
ռերուն հողեղեն իմաստը մոռնաս պահ-
մը, ականջդ խցես ածականներու, վերադիր-
ներու քաղցր ազմուկին, լուսամուտ բանաս,
որպիսի վանքին խորհրդավոր խավարը քիչ
մը մեղմանաս, ու թափանցես հոն թաքնված
գեղեցկություններուն։ Արևուն նայելու, հա-
մեր մարդ նախ աշբերուն բժժանքը պետք
է որ մաքրե, որովհետեւ, ինչպես եղնիկ կը-
ւե, ան որ «ընդ ճառագայթս արեգական
հայիլ կամիցի, պարտի զպլոտութիւն ա-
շացն՝ զաղան և զրիժն ի բաց պարզել, զի
մի՛ մթարքն՝ որ զբօք շողայցն, արգել
հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին»։

Այս պայմաններուն մեջ, հանդգնություն
էր Քասիմի փորձը նարեկը աշխարհաբարի
թարգմանելու, այն պարզունակ աշխարհա-
բարով, որով ան «Մանզում»-ի մեջ կշա-
րադրե իր «Օրվան մտածումներ»-ը կամ
իր թերթուն-վեպերը կհորիներ⁵⁶, թեև նախա-
ձեռնությունը գեղեցիկ էր ինքնին, ինչպես որ
զեղեցիկ էր երվանդ Տեր Անդրեասյանի ալ
փորձը, ճիշտ նույն օրերուն, շարականներին
փունջ մը աշխարհաբարի վերածելու։

Քսան և ավելի տարիներ մարդ այլևս
չկրցավ նարեկին զպիլ։ Քասիմի թարգմա-
նությունը վախցուցեր էր բոլորը։ Ոչ ոք
չկրցավ այլևս հանդգնիլ աշխարհաբարի վե-
րածելու զայն, երբ մանավանդ դեռ նոր
սկսեր էր բյուրեղանալ այդ աշխարհաբա-
րը՝ թարգման կազենալ հանդիսանալու հա-
մար խորհրդավոր այդ գրքին։

Եվ ահա Արմաշը ունեցավ այդ հանդգնու-
թյունը։ Իր երկու նախկին սաներն էին, Թորոս Գուշակյանն ու Գարեգին Տրապի-
զունցին, որոնք, առանց նույնիսկ իրարմե-
լուր ունենալու, ձեռնարկեր էին նարեկը վե-
րածել աշխարհաբարի և լույս կընծայեին
միևնույն տարին։

Թորգոմ իր թարգմանությունը ըրած էր
Կահիրեկ մեջ 1924 հունիսի նոյեմբեր, բայց 1925-ին է, որ տապարության հանձ-
նած էր զայն։

Գարեգին իր թարգմանությունը սկսած էր
Տրապիզոնի մեջ 1921 հոկտեմբերին, «իբրև է
աղատ պահերու հոգեպարար աշխատանք», և լրացուցած էր 1922 նոյեմբերին, բայց

լույս ընծայած հազիվ շորս տարի հետո,
1926-ին։

Անշուշտ որ նարեկի երկու թարգմանիչ-
ները ավելի բախտավոր պիտի ըլլային։
Նարեկը թարգմանել առաջ կրցած էին նա-
րեկացին ըմբռնել ու իրենց աշխարհաբարը
օժտել գրական շնորհով իրենց միտքը շար-
շարելու ճիգը պետք էր, և զայն ունեցան։

Գարեգին պատրիարք թարգմանություն-
մը չէ որ կոտա մեզի։ Ան մեղի կոտա
գրական երկ մը։ Գարեգին աշխարհաբա-
րի պարզ վերածում մը չէ անոր թարգմանու-
թյունը, այլ ստեղծագործություն մը ինքնին։
Իր թարգմանությունը ձոնելու առթիվ իր
վարպետին՝ Դուրյանի, Գարեգին Տրապի-
զունցի կգրե։ «Սրտի խորերեն Աստուծո հետ
խոսող անարատ ոգին ես փափագեցա և
փորձեցի պատկերացնել լեզվով մը՝ որ մեր
ժամանակինն ըլլա և որ, սակայն, չգուհ-
կացնե և չեղծե բոլորովին այդ ոգուն յուրա-
հատուկ ու անփոխարինելի տարազն ու գե-
ղեցկությունները։ Հաջողեցա։—չեմ գտիեր։
Գիտեմ միայն, թե Աստուծո հետ այս երկ-
նարարան խոսակցությունը վերածելով
մարդոց հետ աշխարհաբար խոսակցության՝
կկատարեմ որդիական պարտականություն-
մը թեզ հանդեպ և հոգեռորականի պարտ-
մը այն մարդկության հանդեպ՝ որ կտառա-
պի և սակայն չի գիտեր աղոթել, որ կաղո-
թե՝ բայց չի գիտեր վերանալ, որ կվերանա-
բայց չի գիտեր աննյութականանալ ու ընկ-
լուզվիլ աստվածացնող էության մը լուսա-
ծին ծոցին մեջ»⁵⁷։

Հետո կըսե համեստությամբ մը, զոր բո-
լորս պետք է ունենանք, երբ կփորձենք
ձգտիլ անհնարինին։ «Ընթերցողը ականա-
տես պիլի ըլլա, այս հաջորդական վերլու-
ծում խորհրդածություններու ընթացքին, այն
բոլոր հրաշալի շարժապատկերներուն, ո-
րոնցմով նարեկացու անստգյուտ ոգին, ի-
դեմս մարդկության տիեզերական ոգուն,
կցուցագրվի մեր աշքին առցե։

Աստվածախոսիկ շնորհը շունենալով՝ ու-
ղեցի մարդկության խոսիլ ու թարգմանել
աստվածախոս վարդապետին հոգեշունչ ու
սրտարուխ ողբերգությունները։

Երանի՝ թե հաջողելի լուսակրոն վանակա-
նին աստվածային խաղերուն տալ մարդկա-
յին համապատասխան հունչեր, այն տաք
շունչով՝ որով ան թրթուացուցեր է իր անզու-
գական քնարին ոսկելարերը»⁵⁸։

56 «Աշխարհաբար նարեկ, նարեկան վանքի վանա-
կաններեն Ս. Գրիգոր վարդապետի աղոթագիրքը», գրա-
բար բնագիրեն թարգմանեց Միսաք Ա. Մ. Գոշունյան
(Քասիմ), Կ. Պոլիս, 1902,

58 Անդ, էջ ժթ։

Ըստնք այս առթիվ, որ Գարեգին Տրապիցուցին ունի նաև Նարեկի տաղաշափյալ վերածումը աշխարհաբարի: Այդ աշխատանքը անփակ կմնա գեռ, ու անկե քանի մը հատվածներ միայն լուս ընծայած է ան որբան գիտենք: Այնպես որ լրիվ գաղափար մը չունինք աշխատության ամբողջության մասին: Բայց չենք կարծեր, որ միզը, զոր մարդ ստիպված է ընել տաղաշափված տալու համար Նարեկը, կարենա հարազատ մնալ բնագրին, այնպես ինչպես արձակի վերածած ատեն:

Գարեգին պատրիարքին հետո ալ փորձեր եղան Նարեկը աշխարհաբարի վերածելու⁵⁹: Պատահմամբ հանդիպեցանք «Թաղմավագ»-ին մեջ նման փորձի մը: Հ. Մեսրոպ Շանաշլան, որ այդ փորձը կընե, Մխիթարյանց այն հազվագեց բացառություններն է, որոնք ձեր ևս մտահոգությունն ունին իրենց գրությանց մեջ, ան գրագետ մըն է: ինչպես ցուց կուտան իր արձակ ու ոտանավոր էջերը, զորս կրցած ենք տեսնել:

Գարեգին Տրապիցուցին կրնա հպարտ ըստալ, որ իր պարտքը հատուց:

5. ՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ու հիմա, որ այս էջերը կփակե, ինքնինքը որքան երախտապարտ կզգա այս տողերը գրողը նարեկի թարգմանչին, որ իրեն առիթը տվավ վերապրելու հին օրերը: Ան իր միտքը բերավ նախ իր այցը Արմաշ «տասը նորընծաները տարին»: շափազանց փոքրը էր, որպեսզի կարենար հիշել այդ տասը նորընծաները այն օրերու իրենց կերպարանքին մեջ, և այդ տասնին մեջ միտքը բերեր և զայն: Կհիշե սակայն, իրեն թե այտօր ըլլար, ոգերությունը, զոր կապրեր Արմաշ ովատի այդ օրը, ու ահավոր այն ժխորը ժամուն մեջ, երբ Զարիսափանը կսահմուկեր խորանին վրա հազար ցավերու աղաղակներեն, որոնք կուղղին իրեն գիշերվան այդ մոռալ պահում, ամեն մեկը բժշկություն աղերսելով իր ցավին համար:

Երախտապարտ է անոր, որ առիթը տվավ իրեն, որպեսզի պահ մը մանկանա հոգին, միտքը գա նաև այն շեն քաղաքը, ուր աշքերը բացած է, Ատափազարը, իր շենշող հայ մարդոցմով, որոնք երբեմն կային և հիմա չկան, ու «Եկեղեց»-ի իրիկուները, երբ

⁵⁹ Խշպես հիշեցինք (ան' ա ծանոթ. 12), չենք տեսներ Միքայիլ Խերանյանի տաղաշափալ նոր թարգմանությունը արևելահայ լեզվով, լուս տեսած Երևան, 1960 թվականին:

ատափազարցին եկեղեցի կվազեր «Որդի Աստուծոյ»-ն շկորսնցնելու:

Ան իր միտքը բերավ և «Եկեղեց»-ները, զորս ատափազարցին իր տունն ալ կըներ շաբաթ իրիկուները, երբ տնեցիներն ամեն մեկը «Հաւատով խոստվանիմ»-են տուն մը կըսեր գոփինիփոխ: ու հետո, վերացած տեսակ մը հափշտակության մեջ, նարեկը կոգեին մեկ բերան: «Որդի Աստուծոյ կենդանույ, օրհնեալ ամենայնի...»:

Ան հիշեցուց իրեն և այն մյուս «Եկեղեց»-ն...:

Շատ փոքր էի ես, գրեթե մանուկ: բայց այնպես կհիշեմ այն քանի մը զարհուրելի գիշերները, զորս մենք ապրեցանք...

Դեպքին տարին էր: Սարսափը Կոստանդնովուսեն եկած էր գավառ: ու ամեն տուն գիշերը դողով կանցներ: Խանութիները շուտ կողցին, ու ամեն մարդ կաճապարեր տուն հասնի մութը չկփսած:

Եվ ահա իրիկուն մը կտեսնեմ, որ ամեն մարդ եկեղեցի կվազե: Փսփսուրով իրարու կրսեն, թե հսկում կա ժամը, թե Կոստանդնովուս մեջ ջարդ է պատահեր, և առաջնորդեն լուր է եկեր, որ քանի մը գիշեր «Եկեղեց» ընեն ժամուն մեջ:

Մեծ ու պղտիկ եկեղեցի կվազեն: Մենք, պղտիկներս ալ, մեծերուն հետ կսպրդինք ներս: Ժամերգությունը սկսած է, բայց այնքան կամաց կաղոթեն, որ ոչինչ չես լսեր պահ մը: Եվ ահա հանկարծ միահամուն ողը մը կսկսի մութին մեջ: Ճունկի են բոլորը, և ամենուն ձայնին մեջ կզամա, որ զսպված հեկեկանք մը կա: «Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուծ հզօր...»:

Ա՛հ, պիտի շմոռնամ ես այդ գիշերը, ոչ սարսուը, զոր կատացներ ողբը մութին մեջ, ոչ ալ լոռությունը, զոր ամեն մարդ հետո տուն կտաներ գերագույն սփոփանքի մը պես:

Տարիները անցան, և անոնց հետ հազար փոթորիկ ու հազար աղետ: և անոնք շատ բան խլեցին տարին մեզմե, մեր ունեցածին ու մեր սորվածին: Բայց անոնք երբեք շկրցան մոռցնել տալ հայ ժողովուրդին իր նարեկը: Ան իր բարձի գիրքը մնաց միտ, որովհետո հոն գրված են իր խոռվքն ու հուզումները, իր ճիշն ու զայրուցը, հոգեկան խաղաղությունն ու սփոփանքը:

Նարեկով հայ ժողովուրդը իր ցավը մոռցավ, կրկին փարեցավ կյանքին, ու հրաշք սպասեց...:

Հայ ժողովուրդը նարեկով է, որ կրնա հպարտ նայիլ դարերուն: